«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ – ՆԶՊ և ԱԿ

ՄԱՍՆԱԿԻՑ – Փոխգնդապետ Մկրտիչ Բալանյան

ՂԵԿԱՎԱՐ – Փոխգնդապետ Ա. Իսահակյան

ԹԵՄԱ – Զինղեկի մասնագիտական գիտելիքների կատարելագործման հնարավորությունները հանրակրթական ուսումնական հաստատություններում

2023թ.

Բովանդակություն

Ներածություն..... 3

Գլուխ 1. Զինղեկի մասնագիտական պատրաստության մեթոդաբանությունը 5

Գլուխ 2. Զինղեկի պարտականությունները և ներկայացվող ընդհանուր մասնագիտական պահանջները 14

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այսօր կարևոր է ձևավորել մասնագիտական կոմպետենցիաներ, մեթոդաբանության և մեթոդների մասին համակարգային գիտելիքներ, սոցիալ-հոգեբանամանկավարժական հետազոտությունը կազմակերպելու, պլանավորելու և անցկացնելու կարողություն, տեսական գիտելիքների ներդրման հնարների և ձևերի տիրապետում գործնականում՝ պրակտիկայի ընթացքում դրանք վերլուծելու և համադրելու համար:

Բացի այդ, մեր տարածաշրջանում տիրող բարդ և պայթյունավտանգ վիճակը, թշնամի երկրների ագրեսիվ նկրտումները մեր հանդեպ, և Եվրոպական միության ձգտումը մեր երկիրը ընդգրկելու իրենց պատասխանատվության ոլորտ, առանց հաստատուն երաշխիքի ապահովելու մեր անվտանգությունը, պարտադրում են հայ ժողովրդին մեծապես մտածել երկրի անվտանգության ապահովման մասին, ունենալ մարտունակ և հզոր բանակ, որն ունակ լինի լուծելու հայրենիքի պաշտպանության խնդիրները: Ահա այդ խնդիրների լուծման մեջ իր հաստատուն և կարևորագույն տեղն ունի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը դպրոցներում: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդ-ման ու ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակն է պատրաստել Հայրենիքը պաշտպանելու ունակ, բազմակողմանի զարգացած պատանիներ ու աղջիկներ, հնարավորություն ընձեռել պատանիներին բանակ զորակոչվելուց հետո կարճ ժամանակում տիրապետելու ժամնակակից զենքին ու ռազմական տեխնիկային: Եվ պատահական չէ, որ նոր չափորոշչով առաջարկվող փոփոխություններում ՆԶՊ առարկայի ուսուցումը համալրվել է պարտադիր գործնական բաղադրիչով՝ մարզա-ռազմական ճամբարով, որն ավագ դպրոցի համար կլինի պարտադիր:

Զինղեկներն իրենց աշխատանքային գործունեությունը պետք է ծավալեն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հանրակրթական ավագ դպրոցի նոր չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան: Դասի պրոցեսը կազմակերպելիս ձգտեն նրանց մեջ սերմանել այնպիսի հատկանիշներ, որոնք կնպաստեն համակող-մանի զարգացած, առողջ ապրելակերպի կանոներին

տիրապետող, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները:

Թեմայի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել զինղեկի մասնագիտական գիտելիքների կատարելագործման հնարավորությունները հանրակրթական ուսումնական հաստատություններում: Հաշվի առնելով առաջադրված նպատակը՝ ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել մասնագիտական գիտելիքների բովանդակությունը,

2. վերլուծել արդի կրթական միջավայրում զինղեկի մասնագիտական գիտելիքների բարձրացման հնարավորությունները,

3. Բացահայտել զինղեկի գործունեության արդյունավետությունը և մասնագիտական գիտելիքների զարգացման դինամիկան դասավանդման գործընթացում:

Հոդվածը կնպաստի ուսումնական հաստատության ուսուցման գործընթացում արդյունավետ կազմակերպելու մանկավարժական գործունեություն՝ միտված մասնագիտական ներուժի և վերջնարդյունքների ձևավորմանը:

Հետազոտության մեթոդները:

Մանկավարժական հետազոտության մեթոդներն ուսուցման, դաստիարակության և զարգացման օբյեկտիվ ճանաչողության ուղիներն են ու հնարները:

Հիմնական խնդիրների լուծման նպատակով հետազոտության ընթացքում օգտագործվել են մի շարք մեթոդներ՝ գիտական գրականության ուսումնասիրություն, ժամանակակից տեսությունների վերլուծություն, համադրում և ընդհանրացում, ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ձևերի մոդելավորում, համեմատություն և նմանադրություն: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Գլուխ 1. Զինղեկի մասնագիտական պատրաստության մեթոդաբանությունը:

Յուրաքանչյուր մասնագիտական գործունեություն ենթադրում է որոշակի պահանջներ՝ մասնագիտական բարձր վարպետություն, գիտելիքների ու հմտություն-ների գործածման կարողություն և այլն:

Առանց մեթոդաբանական գիտելիքների անհնար է գրագետ ձևով մանկավար-ժական հետազոտություն իրականացնել: Անհրաժեշտ է, որ մանկավարժական գործունեության բնագավառի ներկայացուցիչները տիրապետեն գիտական հետազո-տության իրականացման մեթոդիկայի հիմնական հասկացություններին, կարողանան գործնականում կիրառել դրանք, տեսական եզրահանգումներ անեն, վերլուծեն, կանխատեսեն և ընդհանրացնեն արդյունքները: Մեթոդաբանությունը պատկերացում է տալիս հետազոտվող խնդիրների լուծման հաջորդականության, շարժունականու-թյան (դինամիկայի) մասին: Այսպիսով, մեթոդաբանությունը յուրաքանչյուր գիտության համար որպես գիտական ճանաչողության հետազոտության մասին ուսմունք հետազոտության գործընթացում կատարում է կողմնորոշիչի դեր[1]:

Դիտարկելով ժամանակակից զինղեկին, որպես ուսումնական գործընթացում գործունեության սուբյեկտ, առանձնացնենք նաև մասնագիտական և մանկավար-ժական որակներ, որոնք կարող են մոտ լինել ընդունակություններին և զուտ անձնային որակներին: Դրանք են՝ մանկավարժական էրուդիցիան, մանկավարժական նպատա-կադրումը, մանկավարժական մտածողությունը, մանկավարժական հնարամտու-թյունը, մանկավարժական կանխատեսումը, մանկավարժական ռեֆլեքսիան: Ընդգծե-լով ուսուցչի մասնագիտական դերի կարևորությունը՝ դիտարկենք նրա ֆունկցիա-ները, ընդունակությունները, կարողությունները, վերլուծենք նրան ներկայացվող պահանջները և հասարակության կողմից նրան ներկայացված սոցիալական սպասե-լիքները: Մասնագիտական բարձր որակավորմամբ գործունեության իրացման համար մարդը պետք է օժտված լինի

[1] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ», 2005, էջ՝ 27:

գիտելիքների և հմտությունների համագումարով, ունենա համապատասխան ընդունակություններ և մասնագիտական կարևոր որակներ։

Ուսուցչի մասնագիտությունը առաջադրում է մի շարք հատուկ պահանջներ, որոնց շարքում հիմնականը մասնագիտական կոմպետենտությունն է և դիդակտիկ մշակույթը։ Նշենք, որ ուսուցչի մանկավարժական ընդունակությունները իրենց բովանդակության մեջ ներառում են շատ անձնային որակներ, որոնք բացահայտվում են որոշակի գործողությունների, հմտությունների միջոցով։ Առանձնացնենք նաև ժամանակակից ուսուցչի մասնագիտական ակադեմիական ընդունակությունները (երբ մանկավարժը գիտի ավելին, քան ուղղակի ուսումնական ծրագիրը, հետևում է գիտության բացահայտումներին և ազատ տիրապետում է նյութին, որի հանդեպ դրսևորում է հետաքրքրություն)։

Ուշադրության են արժանի նաև ուսուցչի պերցեպտիվ ընդունակությունները (աշակերտի ներաշխարհը թափանցելու կարողություն, հոգեբանական դիտողակա-նություն), խոսքային ընդունակությունները (սեփական մտքերը և հույզերը խոսքի, դիմախաղի և մնջախաղի միջոցով պարզ և հստակ արտահայտելու ընդունակություն), կազմակերպչական ընդունակությունները (աշակերտական կոլեկտիվը կազմակեր-պելու, համախմբելու, համատեղ աշխատանքը խթանելու, և սեփական աշխատանքը կազմակերպելու ընդունակությունները)։

Ուսուցչի մասնագիտական որակների շարքին են դասվում նաև ավտորիտար ունակությունները, այսինքն՝ աշակերտների վրա անմիջական հուզակամային ձևով ազդելու և դրա միջոցով հեղինակություն վայելելու ընդունակությունները։ Ավտորի-տար ընդունակությունները նաև կախված են ուսուցչի անձնային որակների մի ամբողջ կոմպլեքսից, մասնավորապես նրա կամային որակներից (պահանջկոտություն, կայունություն, դիմադրողականություն, վճռականություն), ինչպես նաև աշակերտ-ների ուսուցման և դաստիարակության համար պատասխանատվության զգացումից։ Հատկանշական են նաև հաղորդակցական ընդունակությունները, երեխաների հետ շփվելու, նրանց հետ ճիշտ մոտեցում գտնելու, նրանց հետ մանկավարժական տեսանկյունից նպատակահարմար փոխհարաբերություններ ստեղծելու ընդունակու-թյունները, մանկավարժական

տակտի առկայությունը, ինչպես և մանկավարժական երևակայություն կամ կանխատեսական ընդունակությունները։

Ուսուցիչը պետք է գիտական մակարդակով խորապես տիրապետի իր դասավանդած առարկան։ Եվ չբավարարվելով իր ձեռքբերածով՝ անընդհատ պետք է համալրի իր գիտելիքները, ունենա մասնագիտական խելք և մտածողություն։ Իր մասնագիտական առարկան դասավանդող ուսուցիչը պետք է իմանա նրա բովանդակության ամենաչնչին թվացող մասնիկը, իմանա և՛ գլխավորը, և՛ երկրորդականը, մի խոսքով, ամենը։ Մեծանուն մանկավարժ Ա. Ս. Մակարենկոն ասել է. «Աշակերտները կներեն իրենց ուսուցիչների և՛ խստությունը, և՛ չարությունը, և՛ նույնիսկ բծախնդրությունը, բայց չեն ների գործի վատ իմացությունը»[2]։

Այսպիսով, մասնագիտական պատրաստվածությունն ու բազմակողմանի կրթվածությունը և նրա ղեկավարությամբ սովորողներին դեպի գիտելիքների աշխարհ կողմնորոշումը արդի ժամանակաշրջանում դառնում է հասարակական, պետական պահանջ, կենտրոնական գերխնդիր, որի լուծումը պայմանավորված է դպրոցի դերն ու ցավը գիտակցող ուսուցիչների բարեխիղճ գործունեությամբ։

Մեր ժամանակներում ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ և լայն մտահորոիզոն, այլև կարողանա իր այդ ունեցածը դարձնել աշակերտների սեփականությունը, անընդհատ համալրի նրանց գիտելիքները։

Ուսուցչին ներկայացվող հաջորդ մանկավարժական պահանջը աշակերտների մեջ տվյալ թեմայի նկատմամբ հետաքրքրությունների ու պահանջմունքների խթանմանն ուղղված նրա մշտական գործունեությունն է։

Վերջապես, ուսուցչին ներկայացվում է նաև անձնական պահանջներ։ Նա բոլոր առումներով պետք է լինի դաստիարակված, կատարյալ մարդ, կարողանա ճանաչել իր յուրաքանչյուր աշակերտի, հավասարապես կիսի նրանց հաջողություններն ու անհաջողությունները։ Այստեղ տեղին է մեջբերել Ա. Ս. Մակարենկոյի այն խոսքերը, թե՝ «. . . ես իսկական վարպետ եմ դարձել միայն այն

[2] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ», 2005, էջ՝ 83։

ժամանակ, երբ սովորել եմ ասել «արի այստեղ» ձայնի 15-20 երանգներով, երբ սովորել եմ դեմքի, կերպարանքի, ձայնի դրվածքին տալ 20 նրբերանգներ»[3]:

Ուսուցիչը ստեղծագործական մոտեցում պետք է ունենա իր գործի նկատմամբ, ինքնակրթության և ինքնադաստիարակության միջոցով պետք է անընդհատ կատարելագործի իր իմացությունն ու որակները, ուսումնասիրի ուսուցման և դաստիարակության առաջավոր փորձը, հմտորեն կազմակերպի աշակերտների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները:

Սովորեցնելով ուրիշներին ուսուցիչն անընդհատ սովորում է՝ տիրապետելով նոր գիտելիքների և հմտությունների, բարձրացնելով իր մասնագիտական , մանկավարժական և մեթոդական պատրաստության մակարդակները:

Զինղեկի մասնագիտական գործունեության հիմնական խնդիրներից մեկն էլ աշակերտների շրջանում տարվող ռազմահայրենասիրական դաստիարակությունն է:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթաց է: Այդ իմաստով ռազմահայրենասիրական դաստիարա-կության կարևոր օղակ է դպրոցը: Շատ բան է կախված տնօրեններից, ուսուցիչներից և հատկապես զինղեկներից: Ռազմագիտության դասը պետք է լեցուն լինի հայրենասիրական ոգով ու շնչով: Հայրենիքի պետական օրհներգի և բանակի երգերի կատարումը աշակերտների կողմից, զինղեկի զգաստ կեցվածքը նույնպես հայրենասիրություն են ներշնչում: Այս մթնոլորտում աշակերտն անկախ իր կամքից տոգորվում է հայրենասիրությամբ: Իսկ ռազմագիտությունը պետք է ավելի խորը անցնել, միջոցառումներ անցկացնել հայրենասիրական թեմաներով, հանդիպումներ կազմակերպել Արցախյան պատերազմի մասնակիցների, վետերանների, հայրենիքի կառուցման գործում ներդրում ունեցող մարդկանց հետ: Հայրենասիրությունը դաստիարակվում է նաև մեծերի օրինակով: Յուրաքանչյուր ուսուցիչ, երբ խոսում է հայրենասիրության մասին, անպայման անդրադառնում է մեր հերոսներին կամ ազատամարտիկերին: Ծանոթանալով նրանց կենսագրությանը կամ լսելով

---

[3] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ», 2005, էջ՝ 86:

պատերազմի մասնակիցների կենդանի խոսքը՝ աշակերտների մեջ արթնանում է հայրենասիրության ոգին և, ինչու չէ, շատերը կուզենան նմանվել մեր հերոսներին:

Հայրենասիրության դաստիարակության գործում մեծ դեր ունի անձնական օրինակը: Հայրենասիրություն քարոզողները պետք է լինեն ընտրված մարդիկ, բանակում կոփված, պատերազմներին մասնակցած: Հայրենասիրությունը չպետք է լինի արհեստական: Ճչացող, լոզունգային հայրենասիրություն պետք չէ, այն ավելի շատ վնաս կբերի: Հայրենասիրություն քարոզողն ինքը պետք է իր պահվածքով, վարքով օրինակ ծառայի նոր սերնդին, անկեղծ լինի:

Ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրն առավել հրատապ է դառնում, երբ երկրի առաջ ծառացել են նոր մարտահրավերներ: Հայրենասեր լինելը չպետք է կախված լինի քաղաքականությունից: Այստեղ տեղին է նշել մեծն Նժդեհի այն խոսքերը, թե՝ «Հոգու հիվանդություն ունեն այն ժողովուրդները, որոնք դժգոհում են սեփական հայրենիքից»: Ազգային արժեքների պահպանման գործում, կարծում եմ, որ յուաքանչյուրը պետք է սկսի իրենից, պետք է հաշիվ տա իրեն, թե ինքը ինչ է արել Հայրենիքի համար: Միանգամայն ճիշտ է, որ Հայրենիքի համար կյանքը տալը չափազանց մեծ հայրենասիրություն, հերոսություն ու մեծ զոհողություն է: Սակայն բոլորին չես ստիպի հերոսություն անել, դա բացառիկ երևույթ է: Կան հայրենասիրության դրսևորման և այլ ձևեր: Հայրենիքը չլքողը, Հայրենիքը շենացնողը նույնպես հայրենասեր է: Հայրենասեր է յուրաքանչյուր անհատ, ով պահպանում է ազգային արժեքները, ով այս երկրի օրինապաշտ քաղաքացին է:

Այսպիսով, ժամանակակից ուսուցչի մասնագիտական գիտելիքները դառնում են ուսուցչի հետագա մանկավարժական վարպետության հիմնաքարը: Ուսուցիչը պետք է տիրապետի իր մասնագիտության հարակից մյուս բոլոր գիտությունների տեսական կարևորագույն մասերին: Այլ կերպ ասած, ուսուցիչը պետք է համակողմանի զարգացած անձնավորություն լինի: Այս ամենից զատ նաև կոմպետենտ ուսուցիչ լինելու համար կարևորվում է անընդհատ վերապատրաստումը, ատեստավորումը, մասնա-գիտական ունակությունների բարելավումն ու դրանց համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին:

Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական պրոֆեսիոգրամման՝

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման գերխնդիրներով։ Մանկավարժությունը գիտություն է անձի ձևավորման ու զարգացման օրինաչափությունների, կրթության, ուսուցման և դաստիարակության ձևերի, մեթոդների ու բովանդակության մասին։ Մանկավարժության օբյեկտը կրթությունն է, որի միջոցով դպրոցականները տիրապետում են գիտությունների հիմունքներին, ձեռք բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ և դրանց հիման վրա ձևավորվում է իրենց հայացքներն ու համոզմունքները, գիտական աշխարհայացքը, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական որակներն ու հասարակական վարքը[4]։

Մանկավարժական գիտությունների նոր համակարգի մեջ մտնում են բազմաթիվ նոր ճյուղեր, այդ թվում՝ ռազմական մանկավարժությունը, որն ուսումնասիրում է ռազմական ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդության ուսուցման և դաստիարակության հիմնախնդիրները։

Կրկին նշելով, որ հենց դպրոց սոցիալական կառույցում են դրվում ապագա քաղաքացու կյանքի գլխավոր ուղենիշների, արժեքային համակարգի և աշխարհայացքի ձևավորման հիմքերը՝ կարևորենք ժամանակակից ուսուցչի ոչ միայն անձնային և մասնագիտական որակները, այլև ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու կուլտուրան, էթիկան ու տակտը։ Այս ամենի ընդհանրացված եզրագիծը դիտվում է մասնագիտական գործունեության յուրահատուկ վարքականոնի մեջ, որը, ելնելով ուսուցչի՝ համապատասխան օրենսդրությամբ ամրագրված պարտականություններից և իրավունքներից, ուրվագծում է հարաբերությունների այն ոլորտը, որը չի կանոնակարգվում իրավական նորմերով, այլ ենթակա է զուտ բարոյական կարգավորման։ Ահա թե ինչու այսօրվա ուսուցիչների առջև դրված որակավորման մի շարք պահանջները ենթադրում են նաև այնպիսի որակների ձևավորում, որոնք հետապնդում են ուսուցչի մանկավարժական կուլտուրայի և վարպետության ամրապնդում՝ հետևյալ սկզբունքների հետևմամբ.

---

[4] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ», 2005, էջ՝ 9։

• հարգանք երեխայի իրավունքների ու ազատությունների հանդեպ,

• մարդասիրություն, • հոգատարություն,

• օրինապահություն, • պատասխանատվություն,

• ժողովրդավարություն, • համագործակցություն,

• համերաշխություն, • հանդուրժողականություն,

• արժանապատվություն, • արդարություն,

• անաչառություն, • արհեստավարժություն,

• հարգանք կրթական գործընթացի մասնակից կողմերի հանդեպ և այլն:

Այս ցանկն իհարկե սպառիչ չէ և կարող է լրացվել նշված սկզբունքներին չհակասող և իրենից բարոյական արժեք ներկայացնող այլ սկզբունքներով ևս: Մանկավարժական վարպետությունը հանդիսանում է մանկավարժական կուլտուրայի կարևորագույն և ստրուկտուրային բաղադրատարրը: Ուսուցչի մանկավարժական կուլտուրան անձնային որակների բնութագրական ընդհանրություն է, որն արտահայտվում է համառությամբ և հաջողությամբ ոսումնասադիարակչական գործընթացն իրականացնելու ունակությամբ:

Ինչ վերաբերում է ժամանակակից ուսուցչի մանկավարժական էթիկային (նորմերին), ապա նախ նշենք, որ ուսուցչի մասնագիտական էթիկայի հիմնադրույթները սահմանվում են սովորողների, ծնողական համայնքի, մանկավարժական կոլեկտիվի և պետության հետ ուսուցչի փոխհարաբերություններում, ցույց տալիս և նշում ուսուցչի արժանապատվությունն ու մարդկային մյուս արժանիքները, նպաստում ուսուցչի մասնագիտական վարկանիշի ու աշխատանքի որակի բարձրացմանը: Ուսուցչի մանկավարժական էթիկան նպաստում է կրթական ու դաստիարակչական հաստատությունների մշակույթի ձևավորմանը՝ հիմնված վստահության, պատասխանատվության, արդարության և այլ սկզբունքների վրա: Նշենք նաև, որ ժամանակաից ուսուցչի էթիկայի նորմերի հիմնադրույթները մեր երկրում սահմանվում են՝ ելնելով ՀՀ Սահմանադրության, Մարդու և երեխայի իրավունքների համընդհանուր հռչակագրերի, Երեխայի իրավունքների մասին, Կրթության մասին և Հանրակրթության մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության՝ ուսուցչի մասնագիտական գործունեությանն առնչվող որոշումների, Կրթության և գիտության նախարարի հրամանների, նորմատիվ այլ փաստաթղթերի, միջազգային

իրավունքի, բարոյականության համամարդկային դրույթների, ինչպես նաև հայկական դպրոցի դարավոր ավանդույթների ոգուց: Ուսուցչի մանկավարժական տակտն ու մանկավարժական վարպետությունն իրար հետ խիստ փոխկապակցված են. տակտը ձեռք է բերվում վարպետության ընթացքում: Մանկավարժական տակտն ապահովում է նրա մանկվարժական գործունեության, վարքի ճկունությունը: Հարց է առաջանում, թե ժամանակակից ուսուցչին ի՞նչ է հարկավոր մանկավարժական տակտի, էթիկայի նորմերին տիրապետելու, այսինքն մանկավարժական բարձր վարպետությամբ և կուլտուրայով աչքի ընկնելու համար: Ժամանակակից ուսուցչին հարկավոր է ոչ միայն լինել կատարյալ մասնագետ, կամ տիրապետել հարակից այլ գիտությունների, այլ նաև հոգեբանության, բժշկագիտության նեղ գիտելիքների հիմունքներին:

Հմուտ ուսուցիչն այսօր այս ամենին տիրապետելով, կկարողանա յուրաքանչ-յուր տարիքային շրջափուլում ուսումնադաստիարակչական աշխատանքներն այնպես կազմակերպել, որ մաքսիմալ ապահովի երեխայի ՝ որպես աշակերտա-կենտրոն ուսուցման օբյեկտի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Բացի դա, ժամանակակից ուսուցիչը պետք է ունենա համապատասխան գիտելիքներ յուրաքանչյուր երեխային անհատական մոտեցում ցուցաբերելու և անհատական վստահության հիման վրա շփում ստեղծելու համար: Ուսուցիչը պետք է ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին՝ անընդհատ կատարելագործելով, ինքնադաստիարակվելով և ինքնակրթվելով: Իզուր չէ, որ մանկավարժության մի շարք դասական ներկայացուցիչներ, այդ թվում նաև Յու. Ամիրջանյանը, արտահայտում է հետևյալ միտքը. «Ուսուցիչն այնքան ժամանակ է ընդունակ նպաստելու ուրիշների կրթությանը, քաի դեռ ինքն է շարունակում զբաղվել ինքնակրթությամբ»[5]: Հենց սա է բոլոր ժամանակներում եղել ուսուցչի ժամանակակից կերպարը բնորոշող հատկանիշ: Այս ամենի արդյունքում է ձևավորվում ժամանակակից ուսուցչի իրազեկությունը, արդարության, սիրո, հոգատարության, տակտի զգացումն աշակերտների նկատմամբ, ինչն էլ ապահովում է ժամանակակից

[5] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ», 2005:

ուսուցչի հեղինակությամբ պայմանավորված մանկավարժական բարձր վարպետությունն ու կուլտուրան:

Ժամանակակից ուսուցչի որակավորումը և նրա աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր նախապայման է նրա հոգեբանական գրագիտության աճը, տարիքային և ընդհանուր մանկավարժական հոգեբանության գծով գիտելիքների խորացումը: Առանց իմանալու տվյալ տարիքի աշակերտի հոգեբանական առանձնահատկությունները, ուսուցիչը չի կարող ճիշտ գնահատել դեռահասի անհատական-հոգեբանական որակները և չի կարող ճիշտ ընտրել նրա նկատմամբ մանկավարժական ներգործության միջոցներ: Առանց ուսուցչի հոգեբանական գիտելիքների հնարավոր չէ կանխորոշել աշակերտների վարքը, իսկ առանց դրա հնարավոր չէ նրանց անձնավորության նպատակասլաց ու կազմակերպված ձևավորումը: Ուսուցչի ամեն մի քայլը, նրա ամեն մի բառը, գործադրվող ամեն մի հնար որոշակի իմաստ ունեն և աշակերտների մոտ առաջացնում են համապատասխան հոգեբանական արձագանք:

Ուսուցչի և աշակերտների միջև սերտ փոխհարաբերության պարտադիր պայմանը, ինչպես նշվեց, մանկավարժական տակտի առկայությունն է, այսինքն՝

ա) ուսուցչի վերաբերմունքի մեջ պետք է լինի բնականություն և պարզություն՝ առանց անպատշաճ մոտիկության,

բ) վստահություն առանց վարքագծի նորմերի չարաշահման,

գ) տոնի լրջություն առանց ավելորդ լարվածության,

դ) պահանջկոտություն առանց որևէ բծախնդրության,

ե) բարի կամեցողություն առանց փաղաքշանքի,

զ) իրոնիա և հումոր առանց զավեշտության:

Ուսուցչի և աշակերտների միջև հոգեբանական մերձեցման ձևավորմանը նպաստող գործոններից է նաև դասարանում այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որի առկայությամբ յուրաքանչյուր աշակերտ իրեն հավասար զգա հավասարների մեջ: Հակառակ դեպքում՝ մշտապես աշակերտներից մեկին խարազանելով, իսկ մյուսին մնացածների համար օրինակ դարձնելով՝ ուսուցիչն ամրապնդում է անիրավահավա-սար հարաբերություններ: Այսպիսով, ուսուցչի արդարացի վերաբերմունքը դասարանի յուրաքանչյուր աշակերտի հանդեպ, նրա

հոգատարությունը և մտահոգությունը համադասարանցիների միջև հարաբերություններ ստեղծելու մասին ամրապնդում են ուսուցչի հեղինակությունը, իր նկատմամբ (բնականաբար նաև իր դասավանդած առարկայի նկատմամբ) աշակերտների սերն ու հարգանքը:

Նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցչի կամ զինղեկի համար շատ կարևոր է նաև **ռազմական հոգեբանության** իմացությունը: Այն անհրաժեշտ է աշակերտներին, մասնավորապես պատանիներին՝ մեր ապագա զինվորներին, ծանոթացնելու զորամասերում զինորական կարգապահության, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման և միջանձնային գժտությունների բացառման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Գլուխ 2. Զինղեկի պարտականությունները և ներկայացվող ընդհանուր մասնագիտական պահանջները:

1. Աշխատանքային գործառույթները[6]՝

1) իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական չափորոշչին և «Նախնական զինվորական պատրաստություն» (այսուհետ՝ ՆԶՊ) առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան.

2) իրականացնում է տվյալ ուսումնական տարվա դասաբաշխմամբ հատկացված դասարանների ՆԶՊ առարկայի թեմատիկ պլանավորումը.

3) իրականացնում է ՆԶՊ առարկայից բոլոր դասերի պլանավորում (գրավոր).

4) ղեկավարում է ՆԶՊ խմբակների աշխատանքը.

5) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների.

6) ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ միասին կազմակերպում է ներդպրոցական ռազմամարզական և քաղպաշտպանության միջոցառումներ.

---

[6] Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշումը հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկ) աշխատանքային գործառույթների մասին, Երևան, 2023:

7) սովորողներին մասնակից է դարձնում մարզառազմական մրցումներին, խաղերին, ճամբարներին և օլիմպիադաներին:

8) ապահովում է կցագրված զորամասի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (այսուհետ՝ Զ և ԶՀ ծառայություն) համապատասխան տարածքային ստորաբաժանման և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման հետ համագործակցությունը.

9) ապահովում է այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ՆԶՊ առարկայի դասավանդման որակը բարելավելու նպատակով.

10) նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման նպատակով՝ Հաստատության դասղեկների (կուրսղեկների, ռազմագիտական ուղղվա-ծությամբ մասնագիտացված ուսումնական հաստատություններում՝ դասակի հրամանատարների) օգնությամբ նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը և սահմանված ժամանակահատվածում ապահովում պատանիների ներկայությունը
Զ և ԶՀ ծառայություն.

11) աջակցում է, պատանիների ռազմաուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու նպատակով՝ Զ և ԶՀ ծառայության կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքերին.

12) համագործակցում է Հաստատության մյուս մանկավարժների, հոգեբանի, սովորողների ծնողների հետ՝ սովորողների ՆԶՊ առարկայի ուսուցման կազմակերպ-ման և ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերում.

13) համագործակցում է ՆԶՊ առարկան դասավանդող գործընկերների և այլ մասնագետների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

14) մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին:

2. Հաստատության զինղեկի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) Հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Զենքի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները,

գ. ՆԶՊ առարկայի չափորոշչի և ծրագրերի պահանջները, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

դ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, առաջին օգնության հիմունքները,

ե. աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման նվազագույն պահանջները՝

Հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն, սպայական կոչում:

Նախնական զինվորական պատրաստության ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների հաջող կատարումը կախված է զինղեկի՝

դասը հմուտ կազմակերպելուց և մատուցելուց: Նա պարտավոր է տիրապետել ուսումնական աշխատանքների պլանավորման սկզբունքներին, ռազմական ուսուցման բարելավման և կրթական գործընթացի կազմակերպման ու սովորողների գիտելիքների գնահատման հարցերին: Զինղեկը պետք է վերաբերվի, պատրաստվի դասին՝ հաշվի առնելով «ռազմագիտություն» առարկայի առանձնահատկությունը:

ՆԶՊ պլանավորումը: Պլանավորումը մանկավարժական աշխատանքների կազմակերպման կարևորագույն սկզբունքներից է[7]: Նախնական զինվորական պատրաստության պլանավորման հիմնական սկզբունքներն են՝

-ուսուցման գործընթացի կազմակերպումը և ուսումնադաստիարակչական խնդիրների իրականացումը ՆԶՊ ուսումնական ծրագրի համապատասխան.

-յուրաքանչյուր դասի նախօրոք և մանրակրկիտ նախապատրաստում.

-մանկավարժական կոլեկտիվների հետ փոխգործակցության ապահովում.

– յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության վերահսկողություն՝ համաձայն ուսումնական ծրագրի:

Փորձը ցույց է տալիս, որ զինղեկին բաժին է հասնում զգալի թվով պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանք: Առաջին խմբի մեջ են մտնում ժամահաշվարկը, շաբաթական պլանը, թեմատիկ հեռանկարային պլանը, դասավանդման պլանը, զինղեկի անհատական պլանը: Երկրորդ խմբի մեջ կարող են մտնել մյուս բոլոր ծրագրերը, որոնք կապված են ՆԶՊ առարկայի, ռազմահայրենասի-րական կրթության աշխատանքների հետ:

Պլանավորումը և հաշվառումը բարդ և ժամանակատար աշխատանք է, որն էլ զինղեկից պահանջում է հմտություն և համապատասխան գիտելիքներ: Առավել նպատակահարմար է փաստաթղթերը պլանավորել հետևյալ հերթականությամբ.

1. Ժամահաշվարկ,
2. Շաբաթական պլան,
3. Դասացուցակ՝ շաբաթվա և գործնական պարապմունքների համար,
4. Թեմատիկ հեռանկարային պլան,

---

[7] Վ. Մկրտչյան «Ռազմագիտություն» առարկայի դասավանդման մեթոդիկան, http://www.hayzinvor.am/:

5. Պարապմունքի պլան,պլան հակիրճագիր:

Ժամահաշվարկը բաղկացած է մի քանի փոխկապակցված աղյուսակներից: Առաջինը պարունակում է ուսումնական ժամերի բաշխումը կիսամյակի համար: Երկրորդը՝ կիսամյակային ուսումնական ժամերի քանակը առանձին բաժինների ուսումնասիրմամբ՝ կախված դասաժամերի քանակից, զինղեկի ծանրաբեռնվածությունից: Ժամահաշվարկի համար անհրաժեշտ է քաղվածք ուսումնական պլանից, տեղեկություններ սովորողների կազմի, թվի մասին: Նպատակահարմար է ժամահաշվարկը կազմել մինչև շաբաթական պլանը նախապատրաստելը:

Շաբաթական պլանը կազմվում է՝ հաշվի առնելով ներառարկայական և միջառարկայական առնչությունները, թեմաների անցկացման հերթականությունը:

Դասացուցակը ցույց է տալիս պարապմունքների քանակը ըստ շաբաթների՝ համաձայն ուսումնական պլանի: Զինղեկն ընդհանուր դասացուցակի քաղվածքի հիման վրա մշակում և կազմում է ՆԶՊ դասացուցակ շաբաթվա, ամսվա, կիսամյակի համար, որն էլ փակցվում է ՆԶՊ լսարանում:

Հեռանկարային թեմատիկ պլանը ի տարբերություն շաբաթականի, ընդգրկում է դասերի մանրամասն գրառումները, որոնք ներառում են յուրաքանչյուր դասի ուսումնադաստիարակչական նպատակը, մեթոդական բնութագիրը, ներառարկայական կապը, նյութական ապահովվածությունը և այլն: Հեռանկարային թեմատիկ պլանի կազմումը չի պահանջում յուրաքանչյուր դասի մանրամասն պլանավորում:

Դասի պլանը կազմելիս զինղեկը օգտագործում է հեռանկարային թեմատիկ պլանը, որից տվյալ դասի համար վերցնում է ուսումնադաստիարակչական ուղղվածությունը, ուսումնական հարցերը, դասի անցկացման մեթոդաբանությունը՝ նշելով անհրաժեշտ օժանդակ նյութերը և այլն: Ի տարբերություն ընդհանուրի՝ անհատական պլանը մշակվում է այն միջոցառումների հաշվառմամբ, որոնք անցկացվում են ոչ դասարանային պարապմունքի ժամանակ:

Զինղեկի մշակած պլանավորման փաստաթղթերը մեծ օգնություն են դպրոցներում անցկացվող ուսումնական աշխատանքներին: Մի կարևոր գործընթաց, որի արդյունքում հաշվառվում և վերահսկվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը:

Եզրակացություն

Այսպիսով, մենք ներկայացրինք ուսուցչի մասնագիտության կարևորությունն ու նշանակությունը, զինղեկի անձնային և մասնագիտական որակները, ուսուցչի պրոֆեսիան և նրա առանձնահատկությունները, ներկայացվեց նաև թե ինչ է իրենից ներկայացնում մանկավարժական վարպետությունը և ինչպիսի մանկավարժական պահանջներ են ներկայացվում զինղեկին: Պարզ դարձավ, թե որքան կարևոր, դժվարին, պատասխանատու է զինղեկի աշխատանքը: Ինչպիսի նշանակություն ունի այն ԶՈՒ զարգացման և ձևավորման համար:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրների հաջող կատարումը կախված է զինղեկի՝ դասը հմուտ կազմակերպելուց և մատուցելուց: Նա պարտավոր է տիրապետել ուսումնական աշխատանքների պլանավորման սկզբունքներին, ռազմական ուսուցման բարելավման և կրթական գործընթացի կազմակերպման ու սովորողների գիտելիքների գնահատման հարցերին: Զինղեկը պետք է պատասխանատվությամբ վերաբերվի, պատրաստվի դասին (պարապմունքին)՝ հաշվի առնելով «ռազմագիտություն» առարկայի առանձնահատկությունը:

Օգտագործված գրականություն:

1. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (8-12-րդ դասարաններ), Երևան, 2021թ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշումը հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի (զինղեկ) աշխատանքային գործառույթների մասին, Երևան, 2023թ:

3. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ», 2005թ:

4. Ա. Ա. Հակոբյան, ‹‹Մանկավարժության գործունեության հիմունքներ›› (դասախոսությունների թափեթ) Երևան 2015թ:

5. Վ. Մկրտչյան «Ռազմագիտություն» առարկայի դասավանդման մեթոդիկան, http://www.hayzinvor.am/: